ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 25.11.2015թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ 42/15

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Լիվասա» ՍՊԸ-ի 06.11.2015թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-42/15 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով նշված բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից Կենտրոնին ներկայացված Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքը, 19.11.2015թ. թիվ ԴՎԱ/2768 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերը, ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչության տեղեկանքը և 24.11.2015թ. թիվ 3765տվ գրությունը, Նախարարության 09.11.2015թ. թիվ 1/73-1/34282-15 գրությունը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 24.11.2015թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. **<u>«Լիվասա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 06.11.2015թ. ներկայացրած բողոքով «Լիվասա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից լվացքի և մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցել է նաև Ընկերությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությամբ «Լիվասա» ՍՊԸ-ն ճանաչվել է որպես առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

Ընկերությունը հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ նաև՝ Նախարարություն) կողմից տրամադրվել է եզրակացություն այն մասին, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային պարտավորություններ, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 30.10.2015թ. ժամը 09:00-ին տեղի ունեցած նիստի N 4 արձանագրության 1.1 կետով որոշում է կայացրել մերժել Ընկերության հայտը:

Ըստ Ընկերության՝ նշված տեղեկությունը չի համապատասխանում իրակա-նությանը, քանի որ «Լիվասա» ՍՊԸ-ն 14.10.2015թ. դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել, ավելին՝ ունեցել է գերավճար, ինչը հավաստվում է նաև Շենգավիթի հարկային տեսչության կողմից տրամադրված տեղեկանքով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Տվյալ դեպքում ակնհայտ է, որ «Լիվասա» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժելու որևէ իրավական հիմք առկա չէ, քանի որ վերջինս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել:

Ընկերությունը նշել է, որ ստեղծված իրավիճակում սահմանափակվել է «Լիվասա» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքը, քանի որ տվյալ եզրակացությունը տրամադրվում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից և վերջինիս թույլ տված

վրիպակն Ընկերության կողմից կանխատեսելը կամ ուղղելն օբյեկտիվորեն անհնար էր:

«Լիվասա» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով հայտնել է նաև, որ 05.11.2015թ. դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերը նշված վրիպակի վերաբերյալ տեղեկատվություն և «Լիվասա» ՍՊԸ-ի ժամկետանց հարկային պարտավորություններ չունենալու մասին տեղեկանք ստանալու նպատակով, որի վերաբերյալ բողոքը ներկայացնելու օրվա դրությամբ դեռևս պատասխան չի ստացել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է չեղյալ հայտարարել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի N 4 արձանագրության 1.1 կետով «Լիվասա» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը և վերագնահատել Ընկերության հայտը, հաշվի առնելով ժամկետանց հարկային պարտավորություն չունենալու մասին նոր ի հայտ եկած հանգամանքը, ինչպես նաև հիմք ընդունելով Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետը, որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառել ժամանակավոր միջոց, այն է՝ կասեցնել N 6 արձանագրության 1.2 կետով կայացված որոշումները, հաշվի առնելով, որ տվյալ որոշման կատարումը կհանգեցնի պայմանագիրն ավելի բարձր գնով կնքելուն, ինչի պատճառով կխախտվեն գնումների գործընթացի կազմակերպման սկզբունքները, այդ թվում նաև դրա հիմնական նպատակը՝ առավել ցածր գնով ծառայություններ ձեռք բերելը, որն էլ կհանգեցնի պետական միջոցների անխնա վատնմանը:

Ընկերության տնօրենը, մասնակցելով 19.11.2015թ. ժամը 16:30-ին նշանակված հանձնաժողովի նիստին, ամբողջությամբ պնդել է Կենտրոնին 06.11.2015թ. ներկայացրած բողոքը և հայտնել, որ հայտը ներկայացնելու օրվա՝ 2015թ. հոկտեմբերի 14-ի դրությամբ, չի ունեցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ՝ միաժամանակ որպես ապացույց ներկայացնելով ՀՀ ՖՆ Շենգավիթի հարկային տեսչության կողմից տրված տեղեկանքը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

«Լիվասա» ՍՊԸ-ի կողմից 30.10.2015թ. ժամը 11:18-ին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կենտրոն) թեժ գծին արված ահազանգի վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարությունը 02.11.2015թ. թիվ ԴՎԱ/2601 գրությամբ հայտնել է, որ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված

«Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի և 48-րդ կետի համաձայն՝ մասնակցի հայտը գնահատելիս՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի համար հիմք է հանդիսացել ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.10.2015թ. տրամադրված եզրակացությունը:

Պատվիրատուի ներկայացուցիչները, մասնակցելով 19.11.2015թ. ժամը 16:30-ին նշանակված հանձնաժողովի նիստին, ամբողջությամբ պնդել են 02.11.2015թ. թիվ ԴՎԱ/2601 գրությամբ հայտնած դիրքորոշումը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 19.11.2015թ. թիվ ԴՎԱ/2768 գրությամբ Կենտրոնին է ներկայացրել Ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

3. <u>ԳԲԽ-42/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 24.11.2015թ. եզրակացությունը և առաջարկել է «Լիվասա» ՍՊԸ-ի 06.11.2015թ. Կենտրոնին ներկայացրած բողոքը բավարարել մասնակի՝ դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից լվացքի և մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.10.2015թ. ժամը 09:00-ին տեղի ունեցած նիստի N 4 արձանագրության 1.1 կետով «Լիվասա» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը, իսկ Ընկերության հայտը վերագնահատելու մասին պահանջը՝ մերժել:

4. <u>ԳԲԽ-42/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-42/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից լվացքի և մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում

կատարելու ընթացակարգ, որի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լիվասա» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (14.10.2015թ.) չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.10.2015թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության 3.1 կետով սահմանված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի և Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ ներկայացրած թվով 9 մասնակիցների վերաբերյալ ցանկի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Ընթացակարգի 2-րդ (Երևանի կայազոր-2-ի տարածքում ներառված զորամասերի լվացքի ծառայություն) և 3-րդ (Արմավիրի կայազորի տարածքում ներառված զորամասերի լվացքի ծառայություն) չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Լիվասա» ՍՊԸ-ն:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.10.2015թ. տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության՝

- 4.1 կետով որոշում է կայացրել ներկայացված գնային առաջարկների հիման վրա Ընթացակարգի 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Լիվասա» ՍՊԸ-ին:
- 4.3 կետով որոշում է կայացրել Նախարարություն հարցում ներկայացնել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Լիվասա» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

5. Պատվիրատուն Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ տվյալների ճշտման մասին 21.10.2015թ. կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Լիվասա» ՍՊԸ-ի կողմից 2015թ. հոկտեմբերի 14-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Հայաստանի Հանրապետության

պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ:

6. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ***26.10.2015թ.*** Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Լիվասա» ՍՊԸ-ն 2015թ. հոկտեմբերի 14-ին (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 251562 ՀՀ դրամի չափով:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ***30.10.2015թ.*** ժամը 09:00-ին տեղի ունեցած նիստի N 4 արձանագրության 1.1 կետով որոշել է՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան եզրակացությունը, համաձայն որի «Լիվասա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ՝ մերժել Ընկերության հայտը:

8. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից Կենտրոնին ներկայացված Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքի համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչության կողմից ճշտման արդյունքում ***28.10.2015թ.*** shengavit@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեից ՀՀ ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության ashkhen.papoyan@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեին էլեկտրոնային եղանակով ուղարկվել է ***ճշտված եզրակացություն***, համաձայն որի՝ «Լիվասա» ՍՊԸ-ն 14.10.2015թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել՝ նշումով. ***«Խնդրում եմ հիմք վերցնել վերջին տարբերակը»***, սակայն ճշտված եզրակացությունը Նախարարության կողմից ուղարկվել է Պատվիրատուի էլեկտրոնային փոստի հասցեին ***30.10.2015թ. ժամը 19:12-ին***:

9. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ***04.11.2015թ. ժամը 11:00-ին*** տեղի ունեցած նիստի N 5 արձանագրության 1.1 կետով որոշել է՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած ճանաչել «Զոր-Սամ-Սաք» ՍՊԸ-ին, իսկ 1.3 կետով՝ «Զոր-Սամ-Սաք» ՍՊԸ-ին առաջարկել ներկայացնել Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

10. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ***04.11.2015թ. ժամը 15:00-ին*** տեղի ունեցած նիստի N 6 արձանագրության 1.2 կետով որոշել է՝ «Զոր-Սամ-Սաք» ՍՊԸ-ի և «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի որակավորման չափանիշները գնահատել համապա-տասխան «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի պահանջներին և «Զոր-Սամ-Սաք» ՍՊԸ-ին հայտարարել 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով, իսկ «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ին 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակիցներ և անգործության ժամկետի ավարտից հետո վերջիններիս ներկայացնել պայմանագրեր կնքելու առաջարկ:

11. Ընկերության կողմից Կենտրոնի թեժ գծին 30.10.2015թ. ժամը 11:18-ին կատարված ահազանգի վերաբերյալ Կենտրոնը 03.11.2015թ. թիվ 01/04.1/[2431-15] գրությամբ հարցում է կատարել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ խնդրելով հայտնել, Ընկերությունը 14.10.2015թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, թե ոչ:

12. «Լիվասա» ՍՊԸ-ն 05.11.2015թ. գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով հայտնել, թե արդյոք Ընկերությունը 14.10.2015թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, թե ոչ՝ միաժամանակ ներկայացնելով Շենգավիթի հարկային տեսչության կողմից տրված տեղեկանքը:

13. Ի պատասխան Կենտրոնի վերոհիշյալ հարցմանը և «Լիվասա» ՍՊԸ-ի 05.11.2015թ. դիմումին՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 09.11.2015թ. թիվ 1/73-1/34282-15 գրությամբ Կենտրոնին է ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչության գրությունը (պատճենը՝ «Լիվասա» ՍՊԸ-ին), համաձայն որի՝ Ընկերությունը 14.10.2015թ. դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ, սակայն «Լիվասա» ՍՊԸ-ի կողմից 28.10.2015թ. ներկայացված եկամտային հարկի ճշգրտված հաշվարկների արդյունքում պարտավորությունները մարվել են և 14.10.2015թ. դրությամբ Ընկերությունը ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել՝ կից ներկայացնելով վերոհիշյալ փաստը հավաստող ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչության տեղեկանքի պատճենը, ըստ

որի՝ 14.10.2015թ. դրությամբ Ընկերությունն ունեցել է 1806 (հազար ութ հարյուր վեց) ՀՀ դրամի չափով գերավճար:

14. «Լիվասա» ՍՊԸ-ն 06.11.2015թ. ներկայացրած բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին միջնորդել է որպես միջանկյալ ընթացակարգ կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից լվացքի և մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով «ԳԱԿ-ՇՀԾՁԲ15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի N 6 արձանագրության 1.2 կետով կայացված որոշումը:

15. ԳԲԽ-42/15 բողոքը քննող հանձնաժողովը 19.11.2015թ. կայացրած որոշմամբ բավարարել է «Լիվասա» ՍՊԸ-ի միջանկյալ ընթացակարգ կիրառելու վերաբերյալ պահանջը:

16. Ընկերությունը Կենտրոնին է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչության 24.11.2015թ. թիվ 3765տվ գրության պատճենը, համաձայն որի՝ Ընկերությունը 10.10.2015թ.-23.11.2015թ. ընկած ժամանակահատվածում հարկային պարտավորություններ չի ունեցել: 10.10.2015թ. դրությամբ գերավճարը կազմել է 1806 ՀՀ դրամ, 28.10.2015թ. կատարված 260000 ՀՀ դրամ վճարումից հետո՝ 23.11.2015թ. դրությամբ գերավճարը կազմում է 261806 ՀՀ դրամ:

5. <u>Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Քննելով «Լիվասա» ՍՊԸ-ի 06.11.2015թ. ներկայացրած բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է բավարարման մասնակի հետևյալ հիմնավորմամբ.

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենք 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝ հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Ըստ ՀՀ ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության կողմից 26.10.2015թ. տրամադրված եզրակացության՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, որի գումարը կազմել է 251562 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ***30.10.2015թ. ժամը 09:00-ին*** տեղի ունեցած նիստի N 4 արձանագրության 1.1 կետով որոշել է մերժել Ընկերության հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.10.2015թ. եզրակացությամբ

«Լիվասա» ՍՊԸ-ի կողմից ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հանգամանքը:

Այնուհետև, Նախարարությունը, հիմք ընդունելով Շենգավիթի հարկային տեսչության կողմից ***28.10.2015թ.*** տրամադրված ճշտված տեղեկանքը, ***30.10.2015թ. ժամը 19:12-ին*** էլեկտրոնային եղանակով Պատվիրատուին է ուղարկել **2-րդ՝ ճշգրտված եզրակացությունը,** համաձայն որի ***Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 14.10.2015թ., չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ:***

Խորհուրդը գտնում է, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ***04.11.2015թ. ժամը 11:00-ին*** և նույն օրը ***ժամը 15:00-ին*** տեղի ունեցած նիստերով որոշումներ կայացնելիս՝ անտեսել է Նախարարության կողմից 30.10.2015թ. տրամադրված 2-րդ՝ ճշգրտված եզրակացությունը, ըստ որի «Լիվասա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 14.10.2015թ., չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ, մինչդեռ Պատվիրատուն Ընկերության հայտը մերժել է՝ «Լիվասա» ՍՊԸ-ի կողմից ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմքով:

Ավելին, Պատվիրատուն 04.11.2015թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստով որոշում է կայացրել Ընթացակարգի 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Զոր-Սամ-Սաք» ՍՊԸ-ին, իսկ 2-րդ չափաբաժնի մասով՝ «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ին և անգործության ժամկետի ավարտից հետո վերջիններիս ներկայացնել պայմանագրեր կնքելու առաջարկ:

Նման պայմաններում, Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.10.2015թ. ժամը 09:00-ին տեղի ունեցած նիստի N 4 արձանագրության 1.1 կետով «Լիվասա» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու Ընկերության պահանջը ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է«Լիվասա» ՍՊԸ-ի բողոքով ներկայացրած՝ Ընկերության հայտը վերագնահատելու պահանջին, ապա ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, նման որոշում կայացնելու լիազորություն չունի, ուստի Ընկերության հայտը վերագնահատելու պահանջը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Լիվասա» ՍՊԸ-ի 06.11.2015թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի.

1. Դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից լվացքի և մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.10.2015թ. ժամը 09:00-ին տեղի ունեցած նիստի N 4 արձանագրության 1.1 կետով «Լիվասա» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

2. Ընկերության հայտը վերագնահատելու մասով ՝ մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Ոսկանյան Լուսինե**

Անդամ՝ **Գրիգորյան Արամ**